«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР (АРЦАХА): ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ОМУСА
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН
2016

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (5Հ)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ
ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, ի.գ.դ., պրոֆ. **Հ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Հ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Մարգարյան**, ք.գ.դ. **Ս.Մ.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Հ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия
д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (5Հ)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում, 2016

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ալվարդ ՍԱՐԳՍՅԱՆ
Երևանի Պետական Համալսարան,
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, ասպիրանտուրա
Alvardsargsyan7@gmail.com
Գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Գարիկ Քեռյան

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Արցախյան ազատագրական պայքարը, որը հետագայում վերածեց պատերազմի, և Արցախի Հանրապետության դե-ֆակտո անկախությունը նոր մարտահրավերներ էին տարածաշրջանում ջրային պաշարների արդյունավետ կառավարման համար:

Ադրբեջանն ունի խմելու ջրի սկավության և մաքուր ջրի ոչ հավասարաչափ տեղաբաշխվածության խնդիր[1]: Համաձայն «Համաշխարհային պաշարների ինստիտուտ»-ի հրապարակած տվյալների Ադրբեջանը ընդգրկված է «2040 թ. աշխարհի ջրային պաշարների սակավություն ունեցող 33 երկրներ»-ի ցանկում և զբաղեցնում է 18-րդ տեղը [2]:

Ներկայիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հարուստ է ջրային պաշարներով: Ջրային անվտանգությունն ապահովելու տեսանկյունից կարելի է ասել, որ ՀՀ և ԼՂՀ իշխանություններին հաջողվում է հաղթահարել մարտահրավերները, բայց դա հիմնականում պայմանավորված է այն փաստով, որ ջրային պաշարները սկիզբ են առնում երկու հայկական պետությունների սահմաններում: Հետևաբար, ԼՂՀ և ՀՀ ջրային անվտանգության համար կենսական անհրաժեշտություն է Քաշաթաղի ու Քարվաճառի շրջանների ջրային պաշարները:

Չնայած ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցություններում ակտիվ չի քննարկվում ջրային ռեսուրսների դերը երկխոսության հարթակ ստեղծելու հարցում, սակայն այն որոշ ժամանակը մեկ քննարկման թեմա է դառնում՝ ինչպես հակամարտության կողմերի լայն շրջանակներում, այնպես էլ հակամարտությունով հետաքրքրված կազմակերպությունների տարբեր հարթակներում:

Դեռևս 1998-2001թթ. Ղարաբաղյան կողմը հանդես եկավ «վստահության ամրապնդման միջոցառումների» առաջարկություններով, որը ներկայացվեց Մինսկի խմբի համանախագահներին: Դրանց շարքում կար նաև ջրային պաշարների համատեղ օգտագործման շուրջ առաջարկու-

---

[1] **Мустафаев Н.** “Проблема воды в Баку...Источники питьевой воды в Азербайджане ограничены” http://www.anspress.com/heyat-terzi/26-03-2015/problema-vodi-v-baku

[2] World Resources Institute “Ranking the World’s Most Water-Stressed Countries in 2040”, http://www.wri.org/blog/2015/08/ranking-world%E2%80%99s-most-water-stressed-countries-2040

թյուն, որի շրջանակներում սկսվեց կողմերի միջև բանակցություններ ընթանալ: Սակայն, պաշտոնական Բաքուն մերժեց այդ «վստահության ամրապնդման միջոցառումների» փաթեթը՝ ջրային պաշարների համատեղ օգտագործման առաջարկությունը նույնպես[1]:

Որպես ջրային ռեսուրսների համատեղ կառավարման շուրջ հաջորդ քայլի հեղինակ կրկին հանդես եկավ Արցախյան կողմը: Մասնավորապես, Արցախի փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, «Ազատություն» ռադիոկայանի հետ տրված հարցազրույցի ժամանակ նշել է, որ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները պատրաստակամություն են հայտնում Ադրբեջանի հետ երկխոսություն սկսելու ջրային պաշարների համատեղ կառավարման շուրջ:

Ադրբեջանական կողմը կրկին մերժել է համագործակցել Արցախի դե ֆակտո իշխանությունների հետ: Ջրային պաշարների համատեղ կառավարման համաձայնվելը, ԼՂՀ իշխանությունների հետ բանակցային սեղանի նստելը, Ադրբեջանի համար ինքնին կնշանակի ճանաչել Ղարաբաղը, որպես բանակցությունների ինքնուրույն անջատ կողմ:

Պաշտոնական Բաքվի դիրքորոշումը ջրային պաշարների կառավարման շուրջ այլ է: Բաքվի իշխանությունները պարբերաբար օգտագործում են միջազգային հարթակները, որպեսզի մեղադրեն Հայաստանի Հանրապետությանը և Լեռնային Ղարաբաղի իշխանություններին «օկուպացրած տարածքներում» բնակչության բնակեցման, ադրբեջանական գյուղերին ջրազրկելու և էկոլոգիական խնդիրներ առաջացնելու մեջ:

Ջրային պաշարների հարցը ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության համատեքստում ակտիվ քննարկման թեմա դարձավ 2016թ. հունվարի 26-ի Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նիստից հետո, որտեղ Միլիցա Մարկովիչի հեղինակած «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները միտումնավոր զրկված են ջրից» զեկույցի քվեարկության արդյունքում 98 կողմ 71-ը՝ դեմ 40-ն էլ ձեռնպահ, ընդունվեց[2]:

«Ադրբեջանի սահմանամերձ շրջաններում բնակիչները միտումնավոր ջրազրկվել են» վերնագրով բանաձևում հիմնականում շեշտադրությունը վերաբերվում է ջրի իրավունքի կարևորությանն ու խմելու ջրի ազատ մուտքին: Վեհաժողովը հաստատում է, որ կանխամտածված ջրազրկումը չի կարող օգտագործվել որպես անմեղ քաղաքացիներին վնասելու միջոց և ափսոսանք է հայտնում, որ Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի և հարակից այլ տարածքների «օկուպացիան» ստեղծում է հումանիտար և

---

[1] **Бегларян А**. “Решение проблемы воды растопило бы лед недоверия в зоне карабахского конфликта” Август 24, 2013, http://analitikaua.net/2013/reshenie-problemyi-vodyi-rastopilo-byi-led-nedoveriya-v-zone-karabahskogo-konflikta,

[2] «Սարսանգի ջրամբարի վերաբերյալ հակահայկական զեկույցը ընդունվեց», հունվար, 2016http://civilnet.am/2016/01/26/pace-adopted-milica-markovic-sarsang-resolution/#.V5G1adSLTs026

շրջակա միջավայրի խնդիրներ Ադրբեջանի քաղաքացիների համար, ովքեր ապրում են Դաշտային Ղարաբաղի հովիտներում[1]:

Ըստ հեղինակի, այն քաղաքական ենթատեքստ չունի և միտված է լուծելու սոցիալական հարցեր: Սա փորձ է գտնել ճանապարհներ՝ հակամարտության պոտենցիալ լուծման համար[2]:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները այս բանաձևի հետ կապված հանդես եկան հայտարարությամբ, որում կոչ արեցին չանել քայլեր, որոնք կարող են վնասել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված բանակցություններին[3]:

Հայկական պաշտոնական և փորձագիտական մակարդակում Մարկովիչի ելույթի հետ կապված առկա էին բազմաթիվ կարծիքներ: Ադրբեջանի իշխանությունները հաջողություն չկրելով ներկայիս բանակցային ձևաչափում, ամեն կերպ փորձում են մխիթարություն գտնել ինչ-ինչ ձևաչափերում[4]: Այս բանաձևից ադրբեջանը շահեց հիմնականում ինֆորմացիոն-քարոզչական դաշտում[5], որը հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ բանաձևում հեղինակը փարձում էր շեշտը դնել հումանիտար խնդիրների վրա: Մյուս կողմից այն դիտարկվեց որպես հայկական դիվանագիտության պարտություն, քանի որ հենց բանաձևի մեջ տեղ են գտել հակահայկական ձևակերպումներ[6]:

Ադրբեջանական պաշտոնական և փորձագիտական մակարդակում Միլիցիա Մարկովիչի «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները միտումնավոր զրկված են ջրից» բանաձև ընդունվեց որպես դիվանագիտական հաղթանակ: Հատկապես կարևորվում է բանաձևի ձևակերպումը, որ միջազգային այդպիսի հեղինակային կառույցում ևս մեկ անգամ շեշտադրվել է «հայերի կողմից ադրբեջանական տարածքների օկուպացիան» և ակնհայտ հակաադրբեջանական ջրային քաղաքականությունը[7]: Այն մյուս կողմից դիտարկվեց որպես հնարավորություն՝ Ադրբեջանի սահմա-

---

[1] «ԵԽԽՎ բանաձևը Սարսանգի ջրամբարի վերաբերյալ», 27.11.2015 http://armedia.am/arm/news/26949/ekhkhv-banadzevy-sarsangi-jrambari-veraberyal-amboxjakan-teqst.html

[2] Միլիցա Մարկովիչ, «Սարսանգի ջրամբարի վերաբերյալ ԵԽԽՎ-ում ներկայացված զեկույցը քաղաքական ենթատեքստ չունի». http://www.tert.am/am/news/2016/01/26/markovich/1911648

[3] Press Release by the Co-Chairs of the OSCE Minsk Group, VIENNA 22 January 2016 http://www.osce.org/mg/217732

[4] «ԵԽԽՎ պատգամավորները քվեարկեցին խաղաղ գործընթացի օգտին. Է.Նալբանդյան», 02/02/2016, http://www.panorama.am/am/news/2016/02/02/Է-Նալբանդյան/1521907

[5] Մինասյան Սերգեյ. «Մենք պետք է ընդունված հակահայկական զեկույցի մասին մոռանանք», http://www.aravot.am/2016/02/02/653605/

[6] Զուրաբյան Լևոն, «ԵԽԽՎ բանաձևը Հայաստանի դիվանագիտության հերթական ձախողումն է», http://www.azatutyun.am/a/27514589.html

[7] ПАСЕ приняла резолюцию «Преднамеренное лишение воды жителей приграничных регионов Азербайджана, 26 января 0162» http://www.trend.az/azerbaijan/karabakh/2485676.html

նամերձ շրջաններում ապրող բնակչության կյանքի որակի խնդիրների վեր հանման համար:

Արցախի քաղաքական-փորձագիտական դաշտի տեսանկյունը այս բանաձևի հետ կապված հետևյալն է. «ԼՂՀ տարածքում գտնվող Սարսանգի ջրամբարի օգտագործումը, համաձայն միջազգային իրավունքի բոլոր նորմերի, եղել է և լինելու է Արցախի ժողովրդի սուվերեն իրավունքը, որը չի կարող ոտնահարվել որևէ բանաձևում[1], այն պատվիրված բանաձև է, որը իրականության խեղաթյուրում է»[2]:

ԵԽԽՎ պատգամավորների դիրքորոշումը Եվրոպայի խորհրդի անդամ երկրների դիրքորոշումը չէ: Եվ, իհարկե, ԵԽԽՎ կողմից ընդունված բանաձևերը չունեն ոչ մի պարտադիր ուժ ո՛չ հակամարտության կողմերի, ո՛չ Եվրոպայի խորհրդի անդամ երկրների համար: ԵԽԽՎ բանաձևի թերությունը ի սկզբանե եղել է այն, որ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ուսումնասիրությունները իրականացվել են միակողմանի և խնդիր չի դրվել կոնկրետ ապաքաղաքականացված, մարդասիրական և էկոլոգիական հարցեր բարձրացնելու բանաձև կազմել: Սա եզակի բանաձևը չէ ԵԽԽՎ-ի ղարաբաղյան հիմնախնդրի հետ կապված և այն նույնպես արժանացավ նախորդների ճակատագրին՝ մնաց թղթի վրա: Սակայն հատկանշական է, որ ևս մեկ անգամ այս հիմնախնդրում լրջորեն բարձրացվեց ջրային պաշարների հարցը:

Ապրիլյան քառօրյա պատերազմը և դրա հետևանքով առաջացած ռազմական գործողությունները տարածաշրջանում ձևավորել են նոր օրակարգ: Ստեղծված իրավիճակը նոր մարտահրավեր էր տարածաշրջանի ռազմական անվտանգությունն ապահովելու համար: Ջրային պաշարների անվտանգության պահպանման խնդիրը ևս կարևորվում է այս համատեքստում: Ռազմական գործողությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ադրբեջանական կողմի նպատակակետերից մեկը եղել է Արցախի հյուսիսում գտնվող Սարսանգի ջրամբարը[3]: Իսկ հայաստանյան և արցախյան մի շարք փորձագետներ տեղեկատվական դաշտում առաջ էին տանում այն թեզը, որ ռազմական գործողությունների սրացման խորացման դեպքում, Ադրբեջանը պետք է հասկանա, որ հայկական զինուժի խոցման տիրույթում կարող են հայտնվել ինչպես մի շարք ենթակառուցվածքներ, այնպես ել Մինգիչաուրի ջրամբարը[4]: Սակայն ի պատասխան դրան, ԼՂՀ ՊՆ մամլո քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը հայտարարել

---

[1] ԼՂՀ ԱԳՆ պաշտոնական կայք. «ԵԽԽՎ-ն հաստատեց, որ հակամարտության կարգավորման հարցերը գտնվում են իր իրավասության դաշտից դուրս», 26.01.2016, http://news.am/arm/news/308311.html

[2] Բաբայան Դավիթ «ԵԽԽՎ-ն փորձեց բալանս պահել խավիարի և սկզբունքայնության միջև», http://armtimes.com/hy/read/78309

[3] Հովհաննիսյան Արծրուն «Ապրիլյա չորսօրյա պատերազմի վերլուծություն» http://www.aravot.am/2016/04/14/680062/.

[4] Մղդեսյան Արշալույս «Ենթակառուցվածքներ, որ Մինգեչաուրի հետ կարող են հայտնվել հայկական զինուժի խոցման տիրույթում» http://armtimes.com/hy/read/85680

է, որ հայերը չեն կռվում ադրբեջանական ժողովրդի դեմ, թշնամին Ադրբեջանի ռազմաքաղաքական իշխանությունն է[1]:

Ամփոփելով ամբողջը կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները, որ ղարաբաղյան հակամարտությունում ջրային պաշարների գործոնը հիմնականում օգտագործվում է տեղեկատվա-քարոզչական մակարդակում և չնայած, որ Արցախի Հանրապետության իշխանությունները բազմիցս արտահայտել են իրենց պատրաստակամությունը ջրային պաշարների համատեղ օգտագործման վերաբերյալ, Ադրբեջանի իշխանությունները մշատպես հրաժարվում են ցանկացած ձևաչափում բանակցել: Փորձագիտական մակարդակում բացակայում են լուրջ հետազոտությունները, որոնք թույլ կտան արձանագրել թե հակամարտության յուրաքանչյուր կողմ ինչ պայմաններով կարող է բանակցել ջրային պաշարների համատեղ կառավարման շուրջ: Իրականում, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունում ջրային պաշարները կարող են հսկայական դեր խաղալ հակամարտության տրանսֆորմացիայի հարցում:

Ալվարդ Սարգսյան

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *ղարաբաղյան հակամարտություն, ջրային պաշարներ, հակամարտության սրացում, հակամարտության կարգավորում, հիդրո աշխարհաքաղաքականություն*

Արցախը հարուստ է ջրային պաշարներով: ԼՂՀ-ի տարածքում հոսում են ավելի քան 160 լեռնային գետեր և գետակներ: Ադրբեջանի Հանրապետությունում տարեցտարի ավելանում է ջրային պաշարների սակավության հետ կապված խնդիրները, որը կարող է լուրջ էկոլոգիական խնդիրների հանգեցնել:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ջրային պաշարների սակավությունը կարող են սրացնել հակամարտությունները: Սակայն բազմաթիվ հակամարտությունների օրինակները փաստում են, որ ջրային պաշարները կարող են հիմք հանդիսանալ խաղաղության համար երկխոսության հարթակ ստեղծելուն: Այս հոդվածում կփորձենք վեր հանել ջրային ռեսուրսների դերը ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունում, դրա հնարավոր ազդեցությունը կարգավորման ուղիներ որոնելու մեջ:

---

[1] Ованнисян Арцрун: "Ударить по Мингечаурскому водохранилищу—это по-армянски"http://novostikavkaza.com/arcrun/nk/

Алвард Саркисян

РОЛЬ ВОДНЫХ РЕСУРСОВ В НАГОРНО-КАРАБАХСКОМ КОНФЛИКТЕ

Ключевые слова: *Карабахский конфликт, водные ресурсы, эскалация конфликта, разрешение конфликтов, гидра геополитика*

Нагорно Карабахская Республика богата водой. На территории Нагорно-Карабахской Республики протекают более 160 рек и ручьев. В Азербайджанской Республике проблема, связанная с нехваткой водных ресурсов постепенно увеличивается, что может привести к серьезным экологическим проблемам.

Мировой опыт показывает, что нехватка водных ресурсов может усилить конфликты. Тем не менее, многие примеры конфликтов показывают, что водные ресурсы могут служить основой для создания платформы мирного диалога.

В этой статье мы попытаемся определить роль водных ресурсов в азербайджано-карабахском конфликте и его возможное влияние на поиск путей урегулирования.

Alvard Sargsyan

THE ROLE OF WATER RESOURCES IN NAGORNO KARABAKH CONFLICT

Key Words: *Karabakh conflict, water resources, conflict escalation, conflict resolution, hydro geopolitics*

Nagorno Karabakh Republic is rich in water. In the territory of Nagorno Karabakh Republic are flowing more than 160 rivers and streams. In Azerbaijan Republic the problem related to the shortage of water resources has gradually increased, which can lead to serious environmental problems.

The case studies of numerous conflicts show that the scarcity of water resources might intensify conflict situations.

However, many examples of conflicts show that water resources can be a basis to create a platform for dialogue for peace. In this article we will try to identify the role of water resources in the Azerbaijani-Karabakh conflict and its possible impact in the search for ways of settlement.